ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ
(Մեծ երգիծաբանի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

1872 թ. նոյեմբերի սկզբներին Հ. Պարոնյանը ստանձնեց «Մեղվի» խմբագրի պարտականությունները։ Նոյեմբերի 4-ի համարում տպագրված «Հայտարարության» մեջ Հ. Սվաճյանը հայտնում էր, որ «Մեղուի» տնօրինությունը, խմբագրությունը, գործակալությունը, վերջապես ամեն նեղությունը պ. Հ. Պարոնյանի հանձնված է՝ մեղի վերապահելով երբեմն անոր խմբագրության օգնականությունը»[1]։ Հենց այս ժամանակից էլ «Մեղուն» բացառապես կրում է Հ. Պարոնյանի խմբագրական ու հրապարակախոսական անհատականության կնիքը, որ այս երգիծաթերթի առաջադիմական սկզբունքների շարունակությունն ու զարգացումն էր։ Կարճ ժամանակ անց Հ. Սվաճյանը հեռանում է «Մեղվից», թեև երբեմն զգացվում է նրա աշխատակցությունը։

Մինչ այդ, Պարոնյանը արդեն ճանաչված երգիծաբան-հրապարակախոս էր՝ առավելապես իր խմբագրած «Փող առավոտյան» և «Ծիրատ» պարբերականներով։ Նոր շրջանի «Մեղուն» և՛ իբրև երգիծաթերթ, և՛ որպես որոշակի ուղղության պարբերական, ունի իր շատ յուրահատուկ կողմերը թե՛ դաղափարական, թե՛ երգիծական արվեստի տեսակետից։ Նորույթ էր հայերի հարստահարությունների հարցում թուրքական իշխանությունների հանցավոր անտարբերությունը սպանիչ սատիրայի ենթարկելու ուղեգիծը, ընդորում, ուղղված որոշակի պաշտոնյաների դեմ։ Այդպիսի հանդգնություն չէր ունեցել մինչ այդ հրատարակվող որևէ երգիծաթերթ։ Ազգային իրավազրկության խնդիրը Պարոնյանը բարձրացնում էր առօրյա կենդանի փաստերով՝ ընթերցողին մատուցելով գրեթե պատրաստի եզրակացությունը։ Յուլց տալով բռնի տաճկացման փաստերը Սեբաստիայում՝ տեղի կուսակալի անմիջական հրահանգներով ու մասնակցությամբ, Պարոնյանը գրում էր. «Հիմակուհիմա միայն սաչափ կըսենք, թե Սեբաստիայի այս կուսակալին օրովը Սեբաստիա երթալ ուզող հայերը հոս տաճկնան և անանկ երթան նէ՝ մեծ դժվարութենե մը ազատած կըլլան»[2]։ Քաղաքական անօրինակ սրություն ունի Հ. Պարոնյանի հոդվածը Ադրիանուպոլսի վիլայեթի բռնությունների մասին («Հավասարություն»), ըստ որում, Պարոնյանը ստեղծել է ներքին դինամիկայով հագեցած մի տեքստ, որտեղ անխնա մերկացնում է օսմանիզմի՝ հպատակ ժողովուրդների իրավունքների հավասարության, կրոնական անխտրականության վերաբերյալ սկզբունքների կեղծիքը։ Երգիծաբանը ներկայացնում է մի սովորական դեպք՝ կուսակալի որդու թլպատման առթիվ թուրք ազգաբնակչության մեջ ծավալվում են զանգվածային թլպատումներ։ Իրենց մոլեռանդությունից թուրքերը բաժին են հանում նաև հայերին՝ թլպատելով մի տղայի։ «Մեր օգոստափառ սուլթանի քարոզած և հրամայած հա-

---

1 «Մեղու», 4 նոյեմբերի 1871։

2 Նույն տեղում, 23 սեպտեմբերի 1873։

վասարությունը և անխտրությունը աս աստիճան ջերմեռանդությամբ գործագրող պաշտոնյաներուն բյուր շնորհակալություն»[3],— գրում է երգիծաբանը։

Արևմտահայերի «Ազգային սահմանադրության» շրջանի մերքո 1860—1870-ական թթ. օսմանյան կառավարությունը իրականացնում էր նրանց մշակութային-կրոնական իրավունքները սահմանափակելու քաղաքականությունը։ Եթե նախկինում Բ. դուռն իր հրամանագրերն ազգին էր ուղարկում պատրիարքարանի միջոցով, ապա 1870-ական թթ. այդ անում էին արդեն գավառական իշխանությունները, որով ոտնահարվում էին արևմտահայոց կրոնական առաջնորդի իրավասությունների սահմանները։ 1872 թ., երբ սրվել էր Զմյուռնիայի առաջնորդական պաշտոնի շուրջ մղվող պայքարը, տեղի վալին դիմեց՝ կամայականության՝ խախտելով Բ. դռան հաստատած սահմանադրական կարգը՝ ինքնակամ ավելացնելով հայ համայնքի քաղաքական ժողովի անդամների թիվը, մինչդեռ այդ անդամները պետք է ընտրվեին ժողովրդի կողմից։ Ահա և այս իրողության երգիծական ընթացքի ցուցադրումը «Մեղվում». «Ասել կըլլա, որ կուսակալը հիմա էլ ավելի անդամներ պիտի ավելցնե քաղաքական ժողովին վրա, և երբ խռովությունը բոլորովին վերնա Իզմիրեն, ան ատեն, բնականաբար, քաղաքական ժողովը բոլորովին պիտի վերնա»[4]։

«Մեղվում» ծայր է առնում Բ. դռան տնտեսական ու ֆինանսական քաղաքականության սատիրական բացահայտումն ու մեկնաբանությունը, որին Պարոնյանը անդրադարձել է շատ անգամներ։ Ընդհանրապես հայ քաղաքական երգիծանքը իր բազմակողմանի ու բարձրարվեստ դրսևորումները ստացել է պարոնյանական «Մեղվի» էջերում։ Այնուհետև, «Մեղվի» երգիծանքը Պարոնյանի գրչի տակ ձեռք է բերում երկակի՝ և՛ հրապարակախոսական, և՛ գրական արժեք։ Երգիծանքի ժանրը գրեթե հավասարաչափ բաշխվում է այս երկուսի վրա՝ իրենով պայմանավորելով դրանց հասարակական բովանդակությունը։ Այս տեսակետից էլ կարևորություն է ստանում նրա հրապարակախոսության և գրական ստեղծագործության փոխհարաբերությունների բացահայտումը։ Այսպես, հայտնի է, որ «Ազգային ջոջերը» նախապես հղացվել են որպես զուտ հրապարակախոսական երգիծական դիմանկարներ և ապա մշակվելով դարձել ամբողջական գեղարվեստական երկեր։ Կարելի է հիշել այլ թեմաներ ևս, որոնց լրագրական կամ հրապարակախոսական կատարումը հետագայում կամ միաժամանակ պետք է վերաճեր գեղարվեստական երկի։ Այդպիսին է, օրինակ, «Ծառ» վերնագրով հումորեսկը[5]։ Սահմանադրության տարելիցին նվիրված այդ ճառը իր բացառիկ անմտությամբ և անհեթեթությամբ շատ է հիշեցնում «Մեծապատիվ մուրացկանների» բանաստեղծի մենախոսությունը։

«Մեղվի» բերած նոր որակներից պետք է առանձնացնել նրա երգիծանքի անհատական ու հասարակական որոշակիությունը։ Նախորդ շրջանի (նաև հետագայի որոշ հրատարակությունների) հետ համեմատած, Պարոնյանի «Մեղուն» շատ ավելի հարուստ է ժամանակի գործիչների, իրողությունների, ազգային անցուդարձի երգիծական ցուցադրումով։ Այս իմաստով նորովի է ներկայացվում սահմանադրության քաղաքական բովանդակազրկության բացահայտումը։ Վերը տեսանք, որ այդ սահմանադրությունը ամենևին էլ օրենսդրական ակնածանքի առարկա չի եղել օսմանյան կառավարության համար։ Բայց այն հարգանքի առարկա չի եղել նաև ազգային շատ գործիչների աչքին։ Սահմանադրության անունից ամենից շատ կուրծք ծեծողները, ինչպես նկատում է Պարոնյանը, ոչ մի ընդհանուր բան չունեն ազգային շահերի հետ։ Համազգային երևույթի հայտնությունից անմիջապես հետո քողազերծվում է

3 Նույն տեղում, 10 հունիսի։

4 Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու. հ. 7, Երևան, 1969, էջ 141։

5 «Մեղու», 3 հունիսի 1871։

այդ երևույթը սեփական շահերին օտարացնելու, գաղափարը նենգափոխելու կամ լիովին ոտնահարելու իրողությունը։ Նպատակասլաց է դառնում Պարոնյանի երգիծանքը, երբ ծաղրում է սնափառության ու մանրիկ կրքերի մեջ տարուբերվող երեսփոխանների կեցվածքը Ազգային ժողովում։ Պատրիարք Մ. Խրիմյանի ե նրա հակառակորդ քաղաքական ժողովի անդամների ժամանակ Պարոնյանը սատարում էր գավառի շահերով մտահոգ պատրիարքին։ Խրիմյանի հակառակորդները զարմանալի համերաշխությամբ նետվեցին «Մեղվի» վրա՝ փորձելով այն վերջնականապես խափանել տալ։ «Մեղվի» հրատարակությունը քանիցս դադարեցվել է այսպես կոչված ձախակողմյան երեսփոխանների կողմից։ Այդ խմբակցության մեջ էին մտնում Խ. Նար Պեյը, Քր. Ղազարոսյանը, Օ. Խոճասարյանը և ուրիշներ։ Առանձնապես մոլեգնությամբ էր գործում Նար Պեյը, որը ընթերցողների շրջանում իր ունեցած համբավի համար քիչ բանով չէր պարտական «Մեղվի» խայթոցներին։

Մեզանում գաղափարական պարտադրանքի ուժով անհերքելի ճշմարտություն էր համարվում այն, որ դեմոկրատ գործիչները միշտ և ամենուրեք խոնարհվել են ժողովրդի առջև, որովհետև ժողովուրդը անսխալական է և որևէ գործչի մեծության առաջին չափանիշն այն է, թե որքանով է անխառն արտահայտել ժողովրդի տրամադրությունները։ Նույնը պարտադիր է համարվել նաև Հ. Պարոնյանի համար։ Իրականում Պարոնյանը (և ոչ միայն նա) խորապես համոզված էր, որ ժողովրդասեր հրապարակախոսը ինքն է նպաստելու հասարակական կարծիքի ձևավորմանը և որ ժողովրդի մեջ տարբերայնորեն շրջանառող կարծիքը դեռևս չի կարող հասարակական կարծիքի կամ ճշմարտության վերածվել։ Այս առումով ուշագրավ է Պարոնյանի «Մեղուին» դեմ հարձակողներուն» հոդվածը, որտեղ նա պնդում է, որ հավատարիմ է մնում ճշմարտությանը և անկախ ժողովրդի վերաբերմունքից, շարունակելու է իր սկզբունքային մերկացումները։ «Այս պատերազմին մեջ,— գրում է նա,— ժողովուրդը հաղթվելով է, որ հաղթանակ կտանի։ Որովհետև երբ ճշմարտության մը հայտնվիլը ժողովրդյան դայրույթ կպատճառե, ըսել է, որ ժողովուրդը ճշմարտության դեմ կգինվի, ըսել է, որ ժողովուրդը սխալանքի մեջ է»[6]։

«Մեղուն» անսքող իր վերաբերմունքն է հայտնել արևմտահայ պարբերականների նկատմամբ, բանավիճել ըստ հարկին՝ գործի դնելով իր երգիծանքի անսպառ պաշարները։ Պարոնյանը տարբեր առիթներով ձաղկել է մամուլի անսկզբունքայնությունը, հաճկատարությունը զորեղներին, ժողովրդի իրավունքների անտեսումը։ «Մեղուն» դիպուկ երգիծանքով է գնահատել «Մասիսի» և «Փունջի» միջև տևական բանակռիվը և դատը «կենդանի» բառի, դրա ուղղակի և փոխաբերական իմաստների շուրջ։ Նա սարկազմով է պատկերել նաև «Օրագրի» և «Մանզումեի էֆքյարի» նույնքան սնամեջ բանավեճը։ Դրան նվիրված ֆելիետոններից մեկը՝ «Ճակատամարտ «Օրագրո» ընդդեմ «Մանզումեի» վերնագրով, իր տեսակի մեջ իսկական գլուխգործոց է[7]։ Ստեղծվել է խիստ շոշափելի մի երգիծական հակադրություն երևույթի և էության միջև, որը երկուստեք ծիծաղելի է դարձնում «մարտնչող» կողմերին։

Հակառակորդների դեմ «Մեղվի» պայքարն իր ծայրակետին հասավ 1873 թ. սեպտեմբերին, երբ Պարոնյանը տպագրեց «Արտասուք «Մեղվի» հոդվածը։ Երեսփոխանների և ժողովրդի փոխհարաբերությունների մեջ գերակա ժողովուրդն է, իսկ ընտրված անձինք՝ նրա կամքն իրականացնողները, որովհետև երեսփոխանը նրանից է ստանում իր իշխանությունը։ Այս ելակետից էլ շատ հստակ Պարոնյանը ներկայացնում է այդ իշխանության չարաշահումը՝ իբրև բռնապետության անցնելու դրսևորում։ «Ժողովուրդեն ընտրված ըլլալով ժողովրդյան՝ քեզի տված իշխանութենեն զատ ուրիշ իշ-

6 Նույն տեղում, 28 ապրիլի 1873։

7 Նույն տեղում, 4 նոյեմբերի 1872։

խանություն կուզես ունենալ՝ ալ երեսփոխանություն չես, բռնավոր մ՚ես»[8],— գրում է Պարոնյանը։

Հոդվածը իրարանցում առաջ բերեց Խրիմյանի հակառակորդ քաղաքական ժողովի անդամների մեջ։ Նրանց կամակատար «Օրագիրը», «Փունջը» և «Մամուլը» Պարոնյանի հոդվածը մեկնաբանեցին որպես ամբոխավարություն, կոչ ժողովրդին՝ հարձակվելու և բռնություն գործադրելու երեսփոխանության վրա։ «Օրագիրը»՝ միանգամայն իր խմբագրի ջղաձիգ գործելակերպով, բանը հասցրեց այնտեղ, որ տպագրական տեսչության աչքին «Մեղվին» ներկայացրեց որպես խռովարարի։ «Զոյիլյան բանակը» հոդվածում Պարոնյանը հերքեց այդ ամբաստանությունը[9]։

Հայտնի է «Մեղվի» բանավեճը Գ. Այվազյանի «Մամուլի» հետ։ Այս երգիծաթերթի խմբագրի հետ Պարոնյանը բախվում էր ոչ միայն Խրիմյանի պատրիարքության գնահատման հարցում, այլև Վարդովյան—Մաղաքյան հակադրության պատճառով։ Գ. Այվազյանը պաշտպանում էր Մաղաքյանին, Պարոնյանը նույնն անում էր Վարդովյանի անձն ու գործունեությունը բնութագրելիս։ Հայտնի են նաև Պարոնյանի քննադատական խայթող ելույթները մեծահարուստ Հ. Կյոչեյանի՝ «Մամուլի» հովանավորի դեմ[10]։ Այս քննադատությունը, ի թիվս այլոց, առիթ է տվել ասելու, թե առհասարակ Պարոնյանը ատելություն է ունեցել մեծահարուստների՝ այդ «կեղծ բարեգործների» նկատմամբ։ Իրականում յուրաքանչյուրի՝ այդ թվում և հարուստներին բնութագրելիս Պարոնյանը չափանիշ է ունեցել նրանց անձնական գործունեության ազգային օգտակարությունն ու ընհատական առաքինությունը։

«Մեղվի» էջերում բազմաթիվ բնութագրական դիտողություններ կան «Մասիսի» վեհերոտության ու սկզբունքներից նահանջելու, «Մանզումեի էֆզյարի» անհետևողական հեցվածքի վերաբերյալ, որ առանձին ուսումնասիրության թեմաներ կարող են դառնալ։ Ժամանակի հայ մամուլի բնութագրական շատ գծեր, նրա առօրյան, լրագրական բարքերը իրենց բազմաթիվ կողմերով, որոնք այսօր ճանաչողական մեծ նշանակություն ունեն, իրենց արտացոլումն են գտել «Մեղվի» էջերում։

Պարոնյանը հարուստ լրատվություն է մատուցել ընթերցողին նաև դպրոցի ու լուսավորության վերաբերյալ։ Նա երդիծել է այդ դպրոցների ուսումնական հետամնաց ծրագրերը, դասացանկերը, անձեռնհաս տնօրեններին և այլ ստվերոտ կողմեր՝ միայն դրականը և առաջավորը հաստատելու դիրքերից։ Այս ոգով «Մեղուն» ծաղրել է Սամաթիո ս. Սահակյան և Ղալաթիո վարժարանները, Կ. Փանոսյանի Ագապյան իգական դպրոցը և այլն։ Դասագրքերի ոչ միօրինակության առթիվ Պարոնյանը սրամտորեն ծաղրում է հոլովների քանակի շուրջ անվերջ վիճող «լեզվագետներին», և այս ծաղրը հիշեցնում է մեր ոչ վաղ անցյալի նույն բովանդակության բանակռիվները («Գրաբարի խնդիր»)[11]։

Պարոնյանի հրապարակախոսությունը «Մեղվում» ունի գեղարվեստական բարձր արժեք ոչ միայն իր երգիծական անզուգական արվեստի, անսպառ ու անսպասելի սրամտությունների, դիպուկ խոսքի և նրբանկատ հեգնանքին զուգորդվող կրծանիչ սատիրայի, այլև այս ամենից անհրաժեշտորեն բխող ընդհանրացումների և հասարակական կարևորության պատճառով։ 1874 թ. ապրիլին հրատարակելով իր նոր երգիծաթերթը՝ «Թատրոնը», Պարոնյանը նոր հորիզոններ էր բացում իր բարձրարվեստ երգիծանքի համար։ Այս նոր երգիծաթերթը լույս տեսավ այն ժամանակ, երբ Հ. Սվաճյանը «Մեղվի» հրա-

8 Նույն տեղում, 1 սեպտեմբերի 1873։

9 Նույն տեղում, 12 սեպտեմբերի։

10 Նույն տեղում, 21 և 25 հուլիսի։

11 Նույն տեղում, 9 փետրվարի 1874։

տարակության իրավունքը փոխանցեց Հ. Պարոնյանին՝ հնարավորություն տալով նրան «հրապարակ ելնելու և մերովսանն ազգին ծառայելու»[12]։

Հրատարակվելով 1874—1877 թթ., որը շրջադարձային ժամանակաշրջան էր կայսրության հպատակ ժողովուրդների համար, «Թատրոնն» ի հայտ էր դալիս որպես հայ քաղաքական սատիրայի բարձրակետ։ Նրա տարերքը քաղաքական երգիծանքն է, որը դրսևորվել է արևմտահայության անտանելի հարստահարությունների, թուրքական լիբերալ շարժման ու սահմանադրության, սուլթանիզմի բռնակալական քաղաքականության սուր քննադատության մեջ։ «Թատրոնում» շրջանառում է ուղղամիտ և սրաթռիչ երգիծանքը, որը օբյեկտը խոցում է ամենատարբեր կողմերից, այն մերկացնում էական ու երկրորդական հատկանիշների սատիրական այնպիսի համադրմամբ, որ հնարավորություն է տալիս չարիքը պատկերել իր երևույթի ու էության միասնության մեջ։ Այստեղ Պարոնյանը անողոք է ու շիտակ, ամենուրեք՝ կարծեցյալ վսեմի ու հանդիսավորի մեջ ծիծաղելին որոնող ու հայտնաբերող երգիծաբան։

Հայտնի է, որ Պարոնյանը պատրիարք Ն. Վարժապետյանի նկատմամբ ունեցել է ոչ միանշանակ վերաբերմունք, որ բացատրվում է ոչ թե երգիծաբանի անհետևողականությամբ, այլ իր՝ պատրիարքի հակասական ընթացքով։ Ն. Վարժապետյանը, թերևս, ամենադրամատիկ անձն է XIX դարի արևմտահայ հոգևոր գլուխների մեջ, որին վիճակված էր պատրիարքների ավանդական բարեհպատակային կեցվածքը փոխարինել (1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին և Հայկական հարցի միջազգայնացման շրջանում) ազգային ինքնորոշմանը հետամուտ եկեղեցականի վարքագծով՝ առաջացնելով սուլթանի ատելությունն ու ցասումը։ Անկախ իր ակնածալից զգացումներից, Պարոնյանը չվարանեց կշտամբելու նորընտիր պատրիարքին՝ ընտրության առթիվ շնորհավորական չդադարող այցելությունների համար։ Պակաս սրամիտ ծաղրի չարժանացան պատրիարքի անհաջող փորձերը՝ սիրալիր ընդունելություններ միջոցով հաշտեցնելու միմյանց չհանդուրժող «աջակողմյան» և «ձախակողմյան» երեսփոխաններին։ Այդպիսի մի ընդունելության ժամանակ, նկատում է երգիծաբանը, «նեկտարի նման գինի շիշերեն կվազեր ուղղակի երկոտասան երեսփոխանաց կոկորդը, որպեսզի ազգային գործերն ուղղություն առնեն»[13]։

Պատրիարքի քննադատությունը «Թատրոնում» առավել սրություն ստացավ 1876 թ. հունիսին, երբ առաջինը շրջաբերական էր հրապարակել ի պաշտպանություն «օսմանյան հայրենիքի»։ Պարոնյանը բացառիկ անկեղծությամբ ու կրքոտությամբ հանդես եկավ շրջաբերականի դեմ, ցույց տալով, որ արևմտահայության շահերի և «օսմանցիության» քարոզների միջև ոչ մի ընդհանուր բան չկա և որ պատրիարքը անտեսում է «այն եղեռնագործությունները, որոնցմով հայոց ստացվածքն, կրոնքն, կյանքն ու պատիվը բռնաբարված են և կբռնաբարվին»[14]։ «Թատրոնը» կարևոր նշանակություն տվեց այսպես կոչված «կովկասյան խնդրույն» կեղծիքի (Ռուսաստանի դեմ արևելյահայության կարծեցյալ ապստամբության մասին մամուլի տարածած ստահոդ լուրերի) բացահայտմանը, ցույց տալով, որ այդ գործում պատրիարքարանը աննեղելիորեն հապաղում է[15]։ Այս հոդվածի համար թուրքական իշխանությունները երկու ամսով փակեցին «Թատրոնը» (1876 թ. հուլիսի 31-ից մինչև սեպտեմբերի 29-ը)։ Հետագայում պատրիարքի հակաթուրքական դիրքորոշումը և արևմտահայության ինքնավարության հարցում Ռուսաստանի դերի բավական սթափ պատկերացումը պատրիարքի մտայ-

---

12 «Թատրոն», 6 ապրիլի 1874։

13 Նույն տեղում, 29 հունիսի։

14 Նույն տեղում, 31 հուլիսի 1876։

15 Նույն տեղում։

նության մեջ՝ Պարոնյանին մղեցին ըստ ամենայնի պաշտպանելու Ներսեսի գործողությունները։ Իրանով է բացատրվում նաև պատրիարքի երգիծական դիմանկարի համակրական բույրը «Ազգային ջոջերի» մեջ։

Ենթերցողի շրջանում «Թատրոնը» հասկանալի հարգանք էր հարուցում նաև Ազգային ժողովի անկողմնակալ գնահատման պատճառով։ Ուշադրության կենտրոնում էին երգիծաբանի սուր ելույթները Ազգային ժողովի ատենապետ Հ. Տատյանի դեմ։ Երգիծաբանը ի ցույց էր դնում նրա ամբարտավան կեցվածքը երեսփոխանական ժողովում, նրա արհամարհանքը ժողովրդի և սյուս երեսփոխանների հանդեպ։ «Վսեմափայլ պեյը» բռնությունից բացի հակադրվելու այլ բան չուներ և «Թատրոնը» ենթարկվեց հալածանքների, սույնիսկ երկամսյա դադարի (1874 թ. հոկտեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 21-ը)։

Սահմանադրական մարմինների գործունեությունը Պարոնյանը մշտապես պահել է իր քննական տեսադաշտում։ Նա մերթ ծանակում է «ազգային սնտուկի» շուրջ հեղեղված ճամարտակությունները, մերթ՝ երեսփոխանների անիմաստ բանակռիվները, անտերությունը ազգային գործերում և այլն։ Ամենից տպավորիչը, թերևս, Արևմտյան Հայաստանի կացությունը անտեսելու քննադատությունն էր պարբերականում։ Ինքը՝ Պարոնյանը հարստահարությունների պատկերը ներկայացնում է ոչ միայն քրդական ավազակու և իշխանությունների սուր մերկացումներով, այլև դրանից բխող եզրակացություններով։ «Բալուի ազգայնոց վիճակը», «Հարստահարությունք» և նման բնույթի այլ հոդվածներում «Թատրոնը» բռնությունների դեմ բողոքի տրամադրություններ ներարկելուց բացի, առաջադրում էր սեփական ուժերով ըստ հնարավորին պաշտպանվելու գաղափարը։ Բռնակալությանն ընդդիմանալու գործում Պարոնյանը առաջադրում էր տեղական սահմանադրական մարմինների և առաջնորդների ակտիվության խնդիրը։ Բռնադատված վանեցիներին Պարոնյանը խորհուրդ էր տալիս «քաջ ըլլան, դժբախտության կուրծք տան և հաղթելու աշխատին»[16]։ Պարոնյանը անվրեպ ցուցադրում է հարստահարությունների գործում թուրքական իշխանությունների մեղսակցությունը։ Պարոնյանի հեգնանքն այստեղ հասնում է դասականորեն սեղմ ձևակերպման։ «Բարելաեանամ կառավարության ուշադրությունը» հոդվածում նա գրում է. «Հարստահարությունը Մշո կուսակալ կարգված է, հարստահարությունն է Մուշը կառավարողը»[17]։ Դրան անմիջապես հետևում է Կարինի բնակչության տառապանքները նկարագրող նամակը՝ սգո շրջանակի մեջ։ Ընդդիմության նույն ոգով Պարոնյանը գնահատում էր թուրքերի մյուս եղեռնագործությունները։ Զեյթունում թուրքերը հայի են սպանել, և այս փաստին «Թատրոնը» հակադրում է զեյթունցիների ավանդականորեն անհնազանդ ոգին. «Հայու մը սպանվիլը նոր բան մը չէ, բայց Զեյթունի մեջ սպանվիլը քիչ մը նոր է»[18]։

Բռնությունները ներկայացվում են նաև զավեշտի արտաքին շղարշի, իրականում՝ դրանք արդարացնող օսմանյան դատաքննչական մարմինների երեսպաշտ հիմնավորումների մերկացման ենթատեքստով։ «Սեբաստիայում,—գրում է Պարոնյանը,—քանի մը թուրքեր կամ քյուրտեր թմբուկով եկեղեցի կմտնեն ու պատարագիչ քահանային մորուքը ածիլելով՝ եկեղեցվո մեջտեղը կխաղցունեն։

Ահա դեպք մը. որուն հարստահարություն անունը չենք կրնար տալ, որովհետև գործին մեջ ոչ դանակոծություն կա, ոչ ալ սպանություն, այլ խընդություն և ցնծություն»[19]։

«Թատրոնում», հնչակ և իր մյուս պարբերականներում Պարոնյանը խիստ լեզվով է խոսել եկեղեցու անարժան ներկայացուցիչների դեմ։ Նա եր-

---

16 Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1965, էջ 117—118։

17 «Թատրոն», 22 նոյեմբերի 1875։

18 Նույն տեղում, 17 հուլիսի 1876։

19 Նույն տեղում, 15 դեկտեմբերի։

գիծել է Նար Պեյին, Բերայի ս. Հարություն եկեղեցու քարոզիչ Ամբրոսիոս վարդապետին, Վանի տխրահռչակ Պողոս վարդապետին և այլոց։ Այսօր զարմանք կարող է հարուցել Պարոնյանի շարունակական և համառ պայքարը կրոնական ժողովի և նրա անդամների ապօրինությունների դեմ։ Այս հարցում Պարոնյանը հետևում էր Հ. Սվաճյանին, որը «Մեղվի» առաջնահերթ պարտականություններից մեկն էր համարում կղերի թերությունների բացահայտումով հասնել եկեղեցու բարոյական նկարագրի և հեղինակության բարձրացմանը։

«Թատրոնը» անհաշտ ուղեգիծ է վարել հայ հանրության մեջ օտար դավանանքների տարածման դեմ։ 1870-ական թթ. մտքերը հուզող «ազգային միության» (ազգային եկեղեցու և հայ կաթոլիկների մերձեցման) խնդիրը լուծելու հեռանկարում նա բացառապես նախապատվությունը տալիս էր ազգային եկեղեցուն, սակայն իրեն հատուկ իրատեսությամբ պաշտպանում էր համազգի հարանվանությունների համագործակցության մտայնությունը։ Միսիոներների առաքելությունը ծաղրելով, նա, միաժամանակ, բարձր էր կանգնած դավանական նեղմտությունից։ «Սով և բողոքականություն» հոդվածում նա ըստ արժանվույն է գնահատում բողոքականների մարդասիրական օգնությունը Արևմտյան Հայաստանի սովյալներին և քննադատում այն խմբագիրներին, որոնք այդ օգնության մեջ որոնում էին դավանական որոգայթներ[20]։ Պարոնյանը կղերամտության համոզված հակառակորդն էր՝ անկախ որևէ դավանանքի հանդեպ ունեցած նախասիրությունից։

Վերը խոսվեց Վարդովյանի թատրոնի (թատրոն «Օսմանիյե») նկատմամբ Պարոնյանի նախասիրությունների մասին, որ հասնում էր նույնիսկ կողմնակալության, երբ խոսքը վերաբերում էր վերջինիս մրցակիցներ Մաղաքյանին և Ջուխաճյանին։ Սակայն չպետք է մոռանալ, որ Պարոնյանի անձնական նախասիրությունները վերջանում էին այնտեղ, որտեղից սկսվում էին ազգային շահերը։ Այն բանից հետո, երբ Վարդովյանը հաճո կեցվածք ընդունեց իշխանությունների առջև՝ կամավոր դրվելով (զուտ խորհրդանշական իմաստով) թուրքական բանակին, երգիծաբանը այլևս չխնայեց հին բարեկամությունը։ «Ես կըսեմ,—գրում է նա,—թե Վարդովյան էֆենտին հայրենասիրական զգացումներով վառյալ՝ այդ որոշումը ըրած է, սակայն չգիտեմ, թե միշտ կառքով պտըտելու վարժած մեկը, յուր մորուքը սպասավորին սանտրել տված մեկը ինչպես կրնա զինվորություն ընել. ուրիշ բան է, եթե մեկը սետեայով (պատգարակով—Ա. Խ.) երթա պատերազմ և ամսականով մեկը բռնե՝ յուր սուրը անոր քաշել տալու համար»[21]։

Առհասարակ երգիծաբանը բացառիկ անողոքություն էր հանդես բերում, երբ խոսքը վերաբերում էր հայերի թրքասիրական ցույցերին։ «Թատրոնը» ծաղրուծանակի ենթարկեց մի երկու տասնյակի չափ «հայ ազնվականների», հատկապես ոմն Թագվոր էֆ. Պարտիզպանյանի, որի գլխավորությամբ նշված անձինք կամավոր քաղաքապահ զինվոր էին գրվել։ Թագվոր էֆենտու «քաջությունը արդեն ծանոթ է յուր կոտորածներովը, զորս ըրած է տաճկերենեն ֆրանսերենի թարգմանությանցը մեջ։ Մարդ կուզեմ, ուժ կուզեմ, սիրտ կուզեմ ասանկ խումբի մը դիմագրելու համար»[22],—գրում է Հ. Պարոնյանը։

«Թատրոնում» Պարոնյանը դասական խորության հասցրեց քաղաքական սատիրայի ժանրը, որի հնարավորությունները երգիծաբանի գրչի տակ առավել տպավորիչ դրսևորվեցին Թուրքիայի և տերությունների դիվանագիտական փոխհարաբերությունների, Հայկական հարցի ձևավորման հետ կապվող իրավիճակների երգիծական բնութագրերի մեջ։ Այս թեմայով գրած գործերում Պարոնյանը ստեղծել է գործողության և խոսքի կոմիզմի արտակարգ սրամիտ նմուշներ, որոնք պարունակում են ընթերողին կողմնորոշող ընդհանրացումներ։ Ահա խաղաղության պատրվակով Կ. Պոլսում դումարված դեսպանա-

20 Նույն տեղում, 12 հունիսի 1876։

21 Նույն տեղում, 18 դեկտեմբերի 1876։

22 Նույն տեղում, 22 դեկտեմբերի։

ժողովի գիշատչական նպատակների դիպուկ մերկացումը. «Նախ և առաջ խաղաղությունը պետք է վախնա այդ դեսպանաժողովի մեջ մտնելու»[23]։ Անգլիական համբավված մարդասիրության, «քրիստոնեից շահերը» պաշտպանելուն հետամուտ քարոզչական աղմուկի մեջ Պարոնյանը ամենուրեք ցուցադրում էր բրիտանական կայսրության եսասիրական շահերը։ Այդ շահերով մտահոգված անգլիական հասարակական կարծիքը երգիծաբանը նմանեցնում էր հովանոցի, որը «հովը սաստիկ փչելուն պես՝ մյուս կողմը կդառնա կոր»[24]։

1875—1876 թթ. Բալկաններում թուրքական վայրագությունների և Եվրոպայում թուրքական հիդրայի գլխատման գործընթացի իրողությունները՝ միջազգային հարաբերությունների ընդարձակ հետնախորքի վրա, Պարոնյանը ներկայացրել է քաղաքական մեկնաբանի և երգիծաբանի զարմանալիորեն ներդաշնակ համադրմամբ, խոսքի և տրամաբանության համոզիչ ուժով։

«Թատրոնում» Պարոնյանը հաճախ է անդրադարձել 1876 թ. թուրքական սահմանադրությանը։ Երգիծաբանը արևմտահայ այն սակավաթիվ մտածողներից էր, որ ի սկզբանե բացասաբար տրամադրվեց օսմանյան սահմանադրության գործունակության նկատմամբ։ Դրա մեջ նա ամենից առաջ տեսնում էր ոչ թե օսմանյան հասարակության քաղաքական զարգացման, այլ դիվանագիտական նպատակադրման արտահայտություն։ Դիվանագիտություն, որ հետամտում էր խաբելու և՛ հպատակ ժողովուրդներին, և՛ եվրոպական տերություններին՝ արևելյան բռնակալությունը սահմանադրական թզենու տերևով ծածկելու մտահոգությամբ։ Ծաղրելով այդ կեղծ սահմանադրական կեցվածքը, Հ. Պարոնյանը թուրք քաղաքագետներին խորհուրդ էր տալիս թերահավատ Եվրոպային համոզել յուրահատուկ գործելակերպով՝ «սահմանադրություն մ'ալ կհրատարակեմք, որովհետև, ինչպես ըսինք, սահմանադրություն հրատարակելեն ուրիշ բան չենք կրնար ընել մենք»[25]։ Սահմանադրական աղմուկ-աղաղակի մեջ Պարոնյանը նկատում էր թուրքական իշխանությունների ջանքերը՝ թաքցնելու ամենուրեք տարածված բռնություններն ու ապօրինությունները երկրում։ Այս տեսակետից շատ հատկանշական է, որ Պարոնյանը բացահայտում է սուլթանական քարոզչության տարածած ստահոդ լուրերը, թե իբր Թուրքիան, սահմանադրություն հռչակելով, իր առաջադիմությամբ գերազանցել է Ռուսաստանին։ Ժամանակին օսմանյան վերնախավի և «նոր օսմանների» խոհանոցում թխված այդ կեղծիքը հարատևել է մեր օրերի թուրք պատմաբանների և օտապակաս քաղաքագետների ելույթներում, ուստի և Պարոնյանի սպանիչ երգիծանքը այս հարցում լիովին պահպանել է իր արդիական նշանակությունը։ Ահա թուրքական ապատեղեկատվության մերկացումը. «Հեռագրի մը խոսքին նայելով,—գրում է Պարոնյանը,— Մոսկվայի մեջ ժողովուրդը խլրտիլ սկսած է։ Ասդին-անդին թուղթեր փակցուցած են, խնդրելով, որ իրենց ալ օսմանյան սահմանադրության նման սահմանադրություն մը տրվի... Ինչ կըսեք, մեր վիճակը սկսավ նախանձելի ըլլալ, հե՞ հ՞, Ռուսիան պարապ տեղը մեր վիճակը բարվոքելու կաշխատի»[26]։

«Թատրոնը» ծանակում էր օսմանյան խորհրդարանի խոսքերի հեղեղը, մամուլի սահմանադրական ազատության մասին ճամարտակող գործիչներին և այլն։ Օսմանյան սահմանադրական արհեստականորեն ուռճացված ոգևորության մեջ Պարոնյանը հայտնաբերում էր թուրքական լիբերալ շարժման և պահպանողականության կայացրած համաձայնության գաղափարական սնանկությունը։ «Թատրոնի» քաղաքական երգիծանքի սրությունն ու լայն շառավիղները բոլոր հիմքերը տալիս են պնդելու, որ շաբաթաթերթը դատ ավելին կարող էր հասցնել, եթե դրան չխանգարեին պատժիչ գրաքննությունն ու

23 Նույն տեղում, 30 հոկտեմբերի։

24 Նույն տեղում, 4 դեկտեմբերի։

25 Հ. Պարոնյան. նշվ. աշխ., էջ 204։

26 «Թատրոն», 25 դեկտեմբերի 1876։

խմբագիր-հրատարակչի նյութական անհաստատ կացությունը։ 1876 թ. հունվարից Բ. դուռը չդադարող հալածանքներ սկսեց երգիծական հրատարակությունների դեմ՝ ձգտելով վերջ տալ դրանց քաղաքական մերկացումներին։ Արդուլ Համիդի ժամանակ այս անհանդուրժողականությունը վերածվեց կատարյալ հալածանքի։ Երգիծաթերթերին պաշտոնական գաղափարախոսությունը մեղադրում էր անբարոյականության, «ընդհանուր հայրենիքի» քաղաքականությունը խայտառակելու, եվրոպական այլասերված բարքերն ու մտածողությունը ներմուծելու և այլ մեծ ու փոքր մեղքերի մեջ։ 1877 թ. հունվարին Պարոնյանը ցանկացավ դադարեցնել «Թատրոնը», սակայն որոշ «ընթերցասեր ազգային» օգնության խոստումով հուսադրեցին եղգիծաբանին[27], որը շաբաթներեր հրատարակեց ևս մի քանի ամիս։ Նույն թվականի ապրիլին Խիկարը՝ Պարոնյանի պերսոնաժը, մտավախություն էր հայտնում, թե Պեռական խորհուրդը (օսմանյան սահմանադրությամբ կյանքի կոչված մարմին, որը իրականում Արդուլ Համիդի կամակատարն էր) մտադիր է իսպառ խափանել զավեշտական թերթերը («Դադարումն կամիթներու»)[28]։ «Ով որ լրագրույն չդոցվիլն կփափաքի, պետք է որ իր ձեռքովն դադարեցունե զայն»,—դրում էր Հ. Պարոնյանը[29], հայտնելով իր մտադրությունը մոտիկ առաջիկայում իրականացնելու մասին։ Կարճ ժամանակ անց «Թատրոնը» դադարեց։

1876 թ. հունվարի 1-ից Պարոնյանը խմբագրել է «Թատրոն բարեկամ մանկանց» կիսամսյա հանդեսը՝ «Թատրոնին» զուգահեռ։ Առաջին անգամ չէր, որ երգիծաբանը մեկից ավելի թերթ էր խմբագրում, և այս հանգամանքը, մեր կարծիքով, հիմնականում բացատրվում է նյութական սուր կարիքը մեղմելու ակնկալությամբ։ Դրանից առաջ, դարձյալ «Թատրոնին» զուգահեռ, Պարոնյանը հրատարակում էր «Թիյաթրո» արաբատառ թուրքերեն երգիծաթերթը (1874—1875)։

«Թատրոն բարեկամ մանկանց»-ը առաջին մանկական երգիծական հրատարակությունն է հայ մամուլի պատմության մեջ։ Երգիծանքն այստեղ հանդես է գալիս իրեն բարոյական նպատակադրումների դրսևորման ձև և առաջադիմիչ ուժ։ Ժամանակի մանկավարժական գրականության մեջ Պարոնյանը յուրջ նորություն էր բերում՝ համընդհանուր և տաղտկալիորեն պարտադրվող ճշմարտությունները դեռահաս ընթերցողին հրամցնելով թարմ և մատչելի ժանրային հնարանքներով, կատակներով ու սրամտությամբ։ Պարբերականը նախատեսված էր «երեքից մինչև տասներեու տարեկան ընթերցողներու»։ Համար։ Այն հարուստ տվյալներ է տալիս Պարոնյանի մանկավարժական հայացքների վերաբերյալ։ Իր ընթերցողի հետ Պարոնյանը գրուցում է կատակով, սակայն աննկատելիորեն նրան է ներարկում բարոյական ու մտավոր արժեքներ։ Պարբերականի հետաքրքրաշարժ զրույցները, փոքրիկ պատմությունները, խորհրդածությունները, պատկերազարդ նյութերը ամենուրեք ցույց են տալիս, որ խմբագիրը մանուկներին հաղորդում է առաքինության, հայրենասիրության և մարդասիրական զգացումներ։ Բազմազան ու հետաքրքիր են այն նյութերը, որոնք համակում են աենաածանոցի դեպի իմացությունը, բնությունը և նրա զեղեցկությունները։ Բարոյական քարոզին փոխարինում է գեղարվեստական տարբեր միջոցները, որոնց շնորհիվ Պարոնյանը իր ընթերցողի մեջ ձևավորում է որոշակի վարքագիծ և դեռահասական նախասիրություններ։ Պարբերականի խմբագիրը ամենուրեք ելնում է բարոյական պարտքի դաստիարակությունից, որով և պայմանավորվում է նրա վերաբերմունքը մարդու և արտաքին աշխարհի նկատմամբ։ Ոչ քիչ դեպքերում Պարոնյանը այդ պարտքը ստանձնում է կրոնաբարոյական դաստիարակության արժեքներով և շեշտում իր ամենակարևոր նպատակը՝ «դեռահաս տղայոց դաստիա-

27 Նույն տեղում, 22 հունվարի 1877։

28 Նույն տեղում, 23 ապրիլի։

29 Նույն տեղում։

բակությունը», որով կարելի է «պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի ըլլալ»[30]։

Պարոնյանը համոզված էր, որ բարոյական դաստիարակությունը սկսվում է ընտանիքից, ուստի նրա պարբերականը լեցուն է ընտանեկան, կենցաղային իրադրությունների մեջ իրենց փոխհարաբերությունները իրացնող դեռահասների ու մեծահասակների առօրյան պատկերող զրույցներով, պատմվածքներով, զվարճալի պատմություններով և այլն։ Ընդ որում, Պարոնյանը կտրականապես դեմ է մարմնական պատիժներին կամ վախեցնելու միջոցով մանկան վրա ներգործելու արևելյան հետամնաց եղանակներին։ Մանկան անհատականությունը և ինքնուրույնությունը խրախուսելու նպատակով Պարոնյանը նրա մեջ պատվաստում է նաև քննադատական վերաբերմունք մեծերի թերությունների հանդեպ։ Այս կերպ նա սրամտորեն ընթերցողի աչքին ծիծաղելի է դարձնում անմիտ ընդօրինակությունները՝ պճնասիրությունը, վարքագծի, կենցաղի օտարամուտ նորմերը և այլն, մղում քննադատական դիրքի՝ նաև սեփական թերությունների նկատմամբ։ «Հնդկահավին թաթը» խրատական մի պատմվածքում (թարգմանական) այն միտքն է հայտնվում, որ սեփական արատների վրա ծիծաղելը օգնում է դրանցից ազատվելուն[31]։ Պարոնյանը ձգտում է ընթերցողին հաճախ առնչել բնության հետ, նա բացառիկ նշանակություն է տալիս բնության ճանաչողական դերին։ Իր հանդեսի բոլոր համարներում համառոտ տեղեկություններ են տրվում որևէ կենդանու, աշխարհագրական վայրերի և այլնի մասին՝ գրեթե միշտ պատկերազարդ ու հետաքրքրաշարժ։ Մանկան ներաշխարհի մեջ պատուհան բանալով դեպի բնությունը, Պարոնյանը այն աղերսում է հայրենասիրական զգացումներին։ Այսպես, Մասիսի մասին տեղեկությունները զուգորդվում են ազգային պատմության դրվագներով, իսկ Կ. Պոլսին նվիրված ակնարկում վիճակագրական տվյալներ են բերվում տեղի հայ բնակչության մասին (200 000), ընդսմին ցույց է տրվում, որ «քառասուն հազարի մոտ ալ խեղճ խարիպներ կան, որոնք իրենց ընտանիքեն, տունեն-տեղեն հեռու՝ անտանելի խեղճության մեջ կապրին»[32]։ Առանձնահատուկ ջերմությամբ են ներկայացվում Կ. Պոլսի հայ բռնակիրները։ Բարոյական գեղեցկությունը Պարոնյանը զուգորդում է դեղագիտական զգացումներին. «Աշխարհիս որ կողմը կուզես... հարցուր, չես կըրնար գտնել ազգ մը, ցեղ մը, որ Վանա և Մուշի հայերուն չափ վայելուչ կազմություն մը ունենա, մարմնով այնքան ուժեղ ըլլա, տեսքով այնքան դեղեցիկ և իր ահեղ կաղմվածքովն հանդերձ՝ այնքան ալ խոնարհ ըլլա վարքով»[33]։ Ուշադրավ են արհեստների նկատմամբ հետաքրքրություն առաջացնող նյութերը՝ հեղինակային զվարթ ու սրամիտ մտորումներով։ Մի շարք նյութերում մանուկների մեջ նախանձախնդրություն է հրահրվում՝ հաղթահարելու արհեստներին հատուկ դժվարությունները։ Երգիծաբանը գործնական կրթության ամենահետևողական պաշտպաններից էր արևմտահայ իրականության մեջ։

Պարոնյանը հայ մանկական հրատարակության առաջին խմբագիրն էր մեզանում, որին հաջողվեց փոխադարձ կապ հաստատել իր դեռատի ընթերցողի հետ։ Վերջինիս հետ նա նամակներ էր փոխանակում, առաջարկում էր հանելուկներ, կազմակերպում յուրահատուկ մրցույթ՝ հաղթողին ուղարկելով որևէ պարգև իր սուղ միջոցներից, իսկ մերժելու դեպքում խոսքը մատուցում էր այնպիսի սրամտությամբ ու նրբությամբ, որն, ընդհակառակն, ցեղք է բարձրացներ երեխայի տրամադրությունը[34]։ Դասական գրողը դասական էր մնում նաև մանկավարժության բնագավառում։

---

30 «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 1, էջ 8։

31 Նույն տեղում, № 14, էջ 106—108։

32 Նույն տեղում, № 11, էջ 81—82, № 12, էջ 10։

33 Նույն տեղում, № 16, էջ 124։

34 Նույն տեղում, № 2, էջ 15։

«Թատրոն բարեկամ մանկանցը» կարևոր տեղ է հատկացրել մանկան դեղագիտական դաստիարակությանը. այդ են վկայում նրա տպագրած թարգմանական և ինքնուրույն գեղարվեստական փոքրիկ ստեղծագործությունները, որոնց մի մասը, ի դեպ, որքան էլ անստորագիր, մատնում է մեծ երգիծաբանի անմիջական միջամտությունը կամ հեղինակությունը։ Պարոնյանը օգտագործել է նաև առակի ժանրը (Գ. Այվազովսկու, Խ. Գալֆայանի առակները)՝ հաշվի առնելով դրանց բարոյախոսական լայն հնարավորությունները։

Անկասկած, նյութական սղությանը պետք է վերագրել մանկական այս եղակիորեն հաջողված պարբերականի վախճանը։ «Թատրոն բարեկամ մանկանցը» հրատարակվեց մինչև 1877 թ. սկիզբը։ Հինգ ամիս անց, 1877 թ. հունիսին այս պարբերականը հրատարակվեց նոր խմբագրությամբ՝ կորցնելով իր ականավոր խմբագրին և, հետևաբար, իր հարստությունն ու հմայքը։

1879 թ. սեպտեմբեր—1880 թ. ապրիլ ամիսներին Պարոնյանը խմբագրել է «Լույս» պարբերականը։ Այս ժամանակաշրջանում արևմտահայ մամուլը դեռևս ինչ-որ չափով օգտվում էր պատերազմում պարտություն կրած Թուրքիայի գաղափարական վարանումներից։ 1880 թ. էր, որ Աբդուլ Համիդը պետք է անցներ համատարած բռնությունների իր քաղաքականությանը, որտեղ, ի դեպ, աղատ խոսքի և մամուլի ջախջախումը համարվում էր առաջնահերթ նպատակ։

«Լույսը» շարունակում էր «Թատրոնի» քաղաքական սատիրայի բացարած լայն հունը։ Այստեղ Պարոնյանը ամբողջացրել է իր երգիծական դիմանկարների շարքը՝ դրանց տալով հասարակականորեն բացառիկ կարևոր բովանդակություն։ Երգիծաբանը դեռևս «Թատրոնում» սկսած այս շարքը լրացրել է նոր անուններով՝ Խ. Գալֆայան, Տ. Յուսուֆյան, Ստ. Ասլանյան, Հ. Տերոյենց և ուրիշներ, միաժամանակ վերամշակելով արդեն հայտնի ջոջերի դիմանկարները։

Երգիծական դիմանկարների ժանրը Պարոնյանը փոխառել է եվրոպական հրատարակություններից, սակայն կառուցվածքի հղացմամբ ու սեփական կատարմամբ այն օժտել է ստեղծագործական անկրկնելի անհատականությամբ։ Ջոջերի շարքը, ըստ էության, ժամանակի արևմտահայ կյանքի ու գործիչների համայնապատկերն է, ինչպես և դրանց նկատմամբ Պարոնյանի վերաբերմունքի անմիջական բացահայտումը։ Պակաս կարևոր չեն օսմանյան իրականության ու հասարակական տեղաշարժերի գնահատականները, հայ հասարակական գործիչների արժեքավորումը, ռեալիստական գրականության տեսական հիմնավորումները և այլն։ Ջոջերի դիմանկարներն ունեն (և այդ՝ անկախ գեղարվեստորեն անհրաժեշտ դրոտեսկից) ճանաչողական շատ կարևոր նշանակություն և այսօր անհնարին է թեկուզ մոտավորապես վերարտադրել անցյալ դարի 40—70-ական թթ. արևմտահայ իրականությունն ու մտավոր կյանքը՝ առանց Պարոնյանի այս դիմանկարային շարքի։

«Լույսի» քաղաքական երգիծանքի մեջ առանձնահատուկ նշանակություն ունի Արևմտյան Հայաստանի բարենորոգումների և Թուրքիայի ու տերությունների փոխհարաբերության արտացոլումը։ Այս կտրվածքի մեջ Պարոնյանը ցույց է տալիս մերկ իրողությունը՝ իրական բարենորոգումների համար ո՛չ Բ. դուռը և ո՛չ էլ տերությունները չունեն ո՛չ ցանկություն և ո՛չ էլ քաղաքական որևէ ակնկալություն։ Պարոնյանը ծաղրում է բարենորոգումները հրսկող հանձնաժողովի անմիտ գործունեությունը։ Հիշեցնելով «Վաքրթ» թուրքական թերթի այն հայտարարությունը, թե բարենորոգումների համար ստեղծված ֆինանսական հանձնաժողովները մեծ տպավորություն պետք է թողնեն Եվրոպայի վրա, նա առաջարկում է ստեղծել ևս երկու այդպիսի հանձնաժողովներ, որպեսզի «Եվրոպայի վրա ըլլալիք տպավորությունն ալ ավելի մեծ ըլլա»[35]։ Այլ առիթներով ևս Պարոնյանը մերկացնում է բարենորոգումների նախապես կառուցված փակուղին՝ բարենորոգումներ հնարավոր չէ իրա-

35 Հ. Պարոնյան. նշվ. աշխ., էջ 309։

կանացնել, որովհետև ֆինանսներ չկան, իսկ ֆինանսներ չկան, որովհետև բարենորոգումներ հնարավոր չէ իրականացնել։ «Լույսում» ցույց են տրվում այս փակուղին պայմանավորող գործոնները՝ իշխանությունների ձեռնարկած միջոցառումների չնչինությունը, հետամնացության, կեղծիքի ու բռնությունների ավանդական մթնոլորտը կայսրության մեջ։ «Արդ,—գրում է երգիծաբանը,—քանի որ դրամ գտնելու համար բարենորոգում պետք է, ու բարենորոգում ընելու համար դրամ պետք է, ըսել կըլլա, ոչ դրամի երես տեսնալիք ունինք, ոչ ալ բարենորոգման»[36]։ Ընդհակառակն, բարենորոգումների ծխածածկույթի տակ «բռնությունները ավելի կանոնավոր կերպով կշարունակվին»[37]։ Վարսից Սեբաստիա գաղթող թուրքերը վայրագություններ են գործադրում հանդիպող հայկական բնակավայրերում, Դերջանում գայմագամը ինքն է բռնությունների անմիջական մասնակիցը, իսկ Վանի իշխանությունները աչք են փակում հարստահարումները չտեսնելու տալով. արդարանալով, թե «սա պայրամն անցնի, պետք եղածը կտնօրինենք»[38]։ Պարոնյանը ծաղրում է Բեյքըր փաշայի բարենորոգչական առաքելությունը գավառներում. նախքան մայրաքաղաքից մեկնելը, նկատում է երգիծաբանը, փաշան թող տեսնի տեղի հայերի սեփականատիրական իրավունքների ոտնահարումը, որը հողային սեփականության վարչության (էմլաքը իդարեսի) անիրավությունների արդյունքն էր[39]։ Ինչ վերաբերում է Աբեգին փաշայի կարծեցյալ բարենորոգչական գործունեությանը և հայերին հարստահարող քրդերին իբր Ալբանիա աքսորելուն, Պարոնյանը պարզապես ցույց էր տալիս պրոպագանդիստական կեղծիքը. իրականում քրդերը Հալեպից այն կողմ չէին անցել, որ կապվում էր ոչ թե աքսորի, այլ նրանց սովորական քոչվորական տեղաշարժերի հետ։ «Ավելի դյուրին է Ալպանիան Հալեպ աքսորել, քան քյուրտերն՝ Ալպանիա»[40],—նկատում էր նա։

Թուրքական քինախնդիր մամուլն այդ օրերին ակամա բացահայտում էր կառավարության գաղտնի մտադրությունները՝ քրդերին գրգռելով հայերի դեմ և արդարացնելով հարստահարությունները։ Այս և նման այլ առիթներով Պարոնյանը սուր քննադատության է ենթարկել թուրքական «Ճերիտեի հավատիս», «Վաքթ» և «Թերճեմանը հաքըքաթ» թերթերի սադրանքները։

Քաղաքական անցքերի երգիծական մեկնաբանություններում Պարոնյանը խորամուխ էր լինում Անգլիայի արևելյան քաղաքականության մեջ։ Այդ երկիրը, ինչպես նկատում է նա, հավատարիմ է մնում սեփական շահերի հավասարակշռության քաղաքականությանը, իսկ այդպիսի հավասարակշռությունը ապահովվում է թույլ երկրների տարածքների անդամահատման հաշվին։ «Լույսի» էջերում հանդիպում ենք Օսմանյան կայսրության ժողովուրդների իրական կացության և Անգլիայի աշխարհավարական նպատակների անակնկալ ու սրամիտ համադրմանը։ «Բանկ օտոմանը» «Լույսում» պատկերվում է որպես Թուրքիայում տերությունների ծավալած կողոպտչական գործունեության խորհրդանիշ։

Հայկական հարցի ձախողումը Բեռլինի կոնգրեսում Պարոնյանը մի հայտնի չափով բացատրում է ազգային անմիաբանությամբ, իրարամերժ գործողություններ ու պատկերացումների բարդությամբ։ Հայկական հարցի ծագումն ու միջազգայնացումը նա դիտում է որպես հայ ժողովրդին ազգային ինքնությունից զրկելու և դրան ընդդիմանալու դրսևորում։ Հետագայում նա կտրուկ ժխտելու էր Հայկական հարցի ծագման պատահականության վերաբերյալ անհիմն տեսակետները, որպիսին պաշտպանում էր «Մանզումեի էֆքյարի» խմբագիր Կ. Փանոսյանը. «Թող «Մանզումե» այդպես հավատա,—գրում էր նա,—թե Հայկական խնդիրն ինքն իրմե ծագեցավ, ինքն իրմե մտավ եվրո-

36 Նույն տեղում, էջ 349։
37 Նույն տեղում, էջ 311։
38 Նույն տեղում, էջ 308։
39 Նույն տեղում, էջ 349։
40 Նույն տեղում, էջ 337։

պական լրագիրներու և Անդղիո խորհրդարանին մեջ։ Իսկ եթե իրմե զատ ուրիշ հավատացող մը դտնե՝ թող բարեհաճի զայն ցույց տալ մեզ»[41]։

Պարոնյանը «Լույսից» հեռացել է 1880 թ. ապրիլին[42]։ Երկրորդ անգամ նա «Լույսը» խմբագրել է 1882 թ. սկզբին և կարճ ժամանակ անց այն թողել վերջնականապես։

1883 թ. հունվարին նա առանձին ժողովածուներով հրատարակել է «Ծիծաղ» պարբերականը։ Համիդյան սանձակոծ գրաքննության պայմաններում Պարոնյանը հարկադրված էր «Ծիծաղում» դիմել երգիծանքի դասական ձևերից մեկին՝ այլաբանությանը։ Երգիծանքի ուժը այս դեպքում ուղղվում է արատի և ոչ թե դրա անմիջական կրողի դեմ, որով մի հայտնի չափով սահմանափակվում են երգիծանքի կործանարար կարողությունները։ Բուն արատը ևս «Ծիծաղում» հանդես է գալիս ոչ իրական տեսքով, այլ դարձյալ այլաբանորեն, ուստի ասելիքը ընթերցողը կարող էր կռահել միայն զուգորդումներով կամ ակնարկներով։ Երգիծաբանը ակներևաբար նախընտրել է նվազագույնը ոչնչից՝ մարդկանց փոխարեն հրապարակ բերելով նաև կենդանիներին։ Այստեղ գործում են նաև անձնավորված բարոյական հասկացությունները՝ նախանձը, զրպարտությունը, քսությունը, շահը՝ իբրև արատների մարմնավորումներ։ Սրանց են առնչվում Համբավն ու Բախտը, որոնք ամենուրեք շրջանցում են արժանավորներին։ «Ծիծաղի» այլաբանական ծաղրը տարածվում է լայն շրջանով՝ պոլսահայ բարքերից մինչև հասարակական կյանքը, սահմանադրական մարմինների գործունեությունը, մամուլը, նրա գործիչները և այլն։ «Ծիծաղի» տետրակներում հատուկ տեղ է տրված ժամանակի արևմտահայ գրական իրողություններին, որոնց գնահատականի մեջ ևս դրսևորվել են Պարոնյանի գրական-գեղագիտական հայացքները։ Այստեղ Պարոնյանը քիչ է անդրադարձել ազգային-քաղաքական խնդիրներին։ Այս տեսակետից հատկանշական է «Մրջյուններուն բողոքագիրն»՝ Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցի ճակատագրի այլաբանական պատկերը[43]։ Պարոնյանն արտահայտել է իր խորին հիասթափությունը «եվրոպական կոնցերտից» և Հայկական հարցի հաջողությունն առնչել ազգային ներուժի, ճիշտ դիվանագիտության և քաղաքակրթության արժեքները յուրացնելու կարևոր նշանակության հետ։ «Ծիծաղում» երթևեկում են Ազգային ժողովի դատարկամիտ երեսփոխանները, պոլսահայ հարուստ դասերը՝ իրենց իրական կենցաղով ու բարքերով, որոնց բայասական թանձր ուրվագծերի մեջ երգիծաբանն իրականացնում է իր բարոյական արդարացի դատաստանը։ Ազգային առաջընթացի գործում մեծ ակնկալիքներ ունենալով մտավորականությունից, Պարոնյանը անխնա ծաղրել է նրա թերությունները։ Բժիշկները, փաստաբանները, լրագրողները ներկայացվում են իրենց հատուկ, բայց և որոշակիորեն ձևախախտված թեռությունների լաբիրինթոսի մեջ, որտեղ էլ ի հայտ են գալիս երգիծաբանի անսպառ ծաղրն ու սրամտությունները։ Սպանիշ է թերուս բժիշկներին տրված բնութագիրը նորավարտ «մասնագետի» հայտարարության մեջ, որտեղ նա «կիրոստանա նաև ձրիաբար անդիի աշխարհ ղրկել իրեն ներկայացող ալքատ հիվանդները։ Սույն նորընծան կհայտնե նաև, թե հիվանդ չեղողներն ալ գերեզման ուղարկելու մասնագիտություն ունի»[44]։

Երգիծաբանը ծաղրում է գրականության մեջ շարունակ իրեն զգացնել տվող ոճի ճուռոմությունը՝ հիմնականում նկատի առնելով ֆրանսիական գրականության էպիգոններին։ Մյուս գեղագիտական դրույթը գրականության ճշմարտացիության խնդիրն է. այս ելակետային դիրքերից Պարոնյանը մերժում էր Ե. Տեմիրճիպաշյանի և Գր. Օտյանի փոխադարձ սպանչացումները, գրականության ներհայեցողական ըմբռնման դրույթը։ Առանձնահատուկ ար-

41 «Արձագանք», 1883, № 37, էջ 525։

42 Գ. Ստեփանյան. Հակոբ Պարոնյան. Երևան, 1964, էջ 119—120։

43 Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու. Հ. 5, Երևան, 1965, էջ 26—29։

44 Նույն տեղում, էջ 69—70։

ժեք ունի Ս. Յյուսաբի «Մայտայի» այլաբանական քննադատությունը։ Պարոնյանն այստեղ ամբողջացնում է իր ռեալիստական գեղագիտական մոտեցումները գրականության և իրականության փոխհարաբերության, գրականության բարոյական արժեքի, սրա արտացոլման հնարավորությունների և չափանիշների վերաբերյալ։

«Միծաղը» արևմտահայ երգիծանքի ինքնապահպանության խիստ ուշագրավ մի դրսևորում է, երբ մասերը կորցնելու կամ ձևախեղումների գնով, այնուամենայնիվ, ամբողջը կարողանում էր փրկել անխուսափելի թլայող ոչնչացումից։

«Խիկարը» Պարոնյանի խմբագրած վերջին պարբերականն է (լույս է տեսել 1884—1888 թթ.՝ Կ. Պոլսում, Անդրիանուպոլսում և ապա կրկին Կ. Պոլսում)։ Իր ամբողջ ստեղծագործական կյանքում լինելով կոնկրետ ու հասցեագրված երգիծանքի պաշտպան, Պարոնյանը «Միծաղից» հետո փորձեց, ըստ հնարավորին, վերադառնալ իր նախասիրած սկզբունքներին։

Իր ամբողջության մեջ «Խիկարը» ավելի շատ գրական-գեղագիտական, քան հրապարակախոսական հրատարակություն է։ Այստեղ են տպագրվել Պարոնյանի «Քաղաքավարության վնասները», «Պաղտասար աղբարը», երգիծական պատմվածքներ, զրույցներ, այլաբանական որոշ պատումներ, թարգմանություններ և այլն։ Այստեղ առավել քան նկատելի են գրական ու հրապարակախոսական ժանրերի յուրօրինակ սերտաճումները, որի ակնառու դրսևորումներից են «Քանի մը խոսք առ օրիորդ կամ տիկին պատմություն» խորագրով նյութերը։ Այս և այլ երգիծական գործերում պոլսահայ բարքերի, ազգային մարմինների, դպրոցի և լուսավորության, եկեղեցու, մամուլի և այլ խնդիրները «Խիկարում» քննարկվել են երգիծաբանի սրատես հայացքին արժանի դիպուկ գրչով ու դասական վարպետությամբ։ Բարքերի և բարոյականության երգիծումը «Խիկարում» կապվում է հայ ընտանիքի վերածնության նպատակադրման հետ։ «Քաղաքավարության վնասները», «Առտնին տեսարաններ» շարքերը ժամանակի պոլսահայ բարքերի և միջավայրի հոգեբանության երգիծական հանրագիտարանն են։ Պարոնյանն այստեղ հասել է ոսկերչական հրին աշխատանքի, նրա շատ պատմվածքներն ու պատումները, թվում է, կրկնում են միևնույն թեման, սակայն նյութը բացահայտում են ամենատարբեր տեսանկյուններից։

Ազգային դպրոցի և մտավորականության ստորադաս վիճակը Պարոնյանը բացատրում էր հասարակության օտարոտությամբ։ Թողնված լինելով բախտի քմայքներին, մտավորականը ենթարկվում է բարոյական դեգրադացման վտանգին։ Նորից Պարոնյանը ինքնատիպ վերլուծությամբ է ենթարկում մեծապատիվ մուրացկանի բարդույթը հասարակական գիտակցության մեջ։ Հայտնի են հայ մամուլի վաստակաշատ մշակներից մեկին՝ Մ. Գաբամաճյանին օգնության հրավիրող կոչերը «Խիկարում», երբ նա գամված էր անկողնին՝ անդամալույծ և մոռացված ամենքից։ Իրեն՝ մեծ երգիծաբանին ևս մի քանի տարի անց դարանելու էին նույն անտարբերությունն ու մոռացումը։

Եթե «Մեղվից» ու «Թատրոնից» և «Լույսից» դեպի «Միծաղ» Պարոնյանը երգիծանքի կոնկրետությունից անցում էր կատարելու դեպի այլաբանություն, ապա «Խիկարում» նկատվում է այս շարժման հակառակ ընթացքը՝ վերադարձ այլաբանությունից դեպի որոշակին ու կոնկրետը։ Թաքուն բանավեճերից ու երկարաշունչ թարգմանություններից հրաժարվելով (որ ակնառու է Կ. Պոլսի առաջին շրջանի՝ 1884 թ. «Խիկարում»), Պարոնյանը Ադրիանուպոլսում և ապա կրկին մայրաքաղաքում իր երգիծանքին տվեց հստակություն ու նպատակասլացություն՝ լրիվ տեսանելի դարձնելով իր թիրախները։ Տեսականորեն, սակայն, Պարոնյանը ավելին էր ենթադրում, նշելով, որ դա հնարավոր չէ. «Պահանջել իրմե («Խիկարից»—Ա. Խ.), որ խոսի այն լեզվով, որով կխոսեր երբեմն «Մեղուի», «Թատրոնի», «Լույսի» և ազգային ուրիշ լրատուց մեջ՝ անկարելին պահանջել է, որովհետև «Խիկար» լրագրական տեսչության

կողմն արտոնված թերթ մը չէ, որովհետև «Խիկարին» ձեռագիրներն գրաքննական բովեն անցնելեն հետո կհանձնվին մամլոյ»[45],—գրում էր նա։

«Խիկարի» էջերում Պարոնյանը մշակեց երգիծական գովազդի ժանրը, առաջինը և թերևս, եզակին հայ մամուլում, որը, ցավոք, այսօր մոռացության է մատնված։ Անդրադառնալով Կ. Պոլսի գրական կյանքին, Պարոնյանը այստեղ ևս ծաղրել է փքուռուցք ոճը, նմանակությունը, գավառականությունը և այլն։ Նա չի անդրադարձել «Արևելքի» և «Մասիսի» առաջ մղած գրական նոր շարժմանը։ Սառնությունը, որ ստեղծվել էր «Արևելքի» երիտասարդ որդեգրների և Պարոնյանի միջև, թերևս, նաև երգիծաբանի սուղ ժամանակը, նրան խանգարեցին արձագանքելու իրապաշտական շարժմանը։ Այսուհանդերձ, անկախ այդ շարժման որակներից ու դրանք արմատավորող երիտասարդ մտավորականների հետ ունեցած փոխհարաբերություններից, Պարոնյանը անպայմանորեն կանգնած է արևմտահայ ռեալիստական գրականության ու գեղագիտության ակունքների մոտ։ Բացի Պարոնյանից, այս ասպարեզում ուշագրավ երևույթ էր նաև «Եսթեր» ստորագրությամբ հեղինակը, որը «Խիկարում» դրաքննադատական նուրբ դիտողություններ է արել գրական երկի լեզվական միջոցների ու նրա բովանդակության վերաբերյալ։ Կարևոր է այս հեղինակի մի այլ հոդվածը՝ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբարի» մասին, որը երգիծաբանի այս գործը արժեքավորող առաջին լուրջ քննադատական խոսքն է արևմտահայ կյանքում։

Հ. Պարոնյանի խմբագրած պարբերականները և իր իսկ հրապարակախոսությունը ժամանակի արևմտահայ մտավոր շարժման ամենաբարձր արտահայտություններից են, որոնց նորովի ուսումնասիրությունը բազմաթիվ նոր ծալքեր կհայտնաբերի այդ շարժումն առավել լրիվ ու ամբողջական պատկերացնելու համար։

ПЕРИОДИЧЕСКИЕ ИЗДАНИЯ АКОПА ПАРОНЯНА

(К 150-летию со дня рождения великого сатирика)

Доктор ист. наук А. А. ХАРАТЯН

Резюме

1870—1880-е годы были самым плодотворным периодом редакторской и публицистической деятельности А. Пароняна. Именно за эти десятилетия он издал журналы «Пох аравотян» («Утренний горн»), «Мегу» («Пчела»), «Татрон» («Театр»), «Татрон барекам манканц» («Театр—друг малышей»), «Луйс» («Свет»), «Цнцах» («Смех») и «Хпкар», помещая на их страницах собственные сатирические произведения. В публицистике А. Пароняна сатира своим острием была направлена против османского деспотизма, бесправия западных армян и турецкой действительности, попрания социальных, национальных и культурных прав армянского народа. В периодических изданиях Пароняна политическая сатира достигла классического мастерства, способствуя углублению в армянском народе настроений национального самосознания. В зависимости от цензурной политики турецкого правительства сатира А. Пароняна проявлялась в двух основных формах: от конкретного к аллегории и наоборот.

---

45 «Խիկար», 1885 Հունվար, էջ Դ։